ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունվարի 2020 թվականի N 1-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով՝ ***որոշում եմ.***

Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Ն. Շադունց

2020թ. հունվարի 09
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«09» հունվարի 2020 թվականի N 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի N 390-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի 2020 թվականի գնումների պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունվարի 09
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հունվարի 2020 թվականի N 3-Ա

ՏԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի <<Համայնքային ծառայողների ատեստավորման կարգը սահմանելու մասին>> թիվ 15-Ն հրամանը, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար (ծածկագիր՝ 1.2-1) Արտակ Բաղդագյուլյանի, աշխատակազմի գլխավոր մասնագետ-հաշվապահ (ծածկագիր՝ 2.3-1) Սուսաննա Ալավերդյանի և աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-3) Արշալույս Ավետիսյանի հերթական ատեստավորման օր նշանակել 2020 թվականի փետրվարի 21-ին ժամը 13:00-ին:
2. Ատեստավորման հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Տեղի համայնքապետարանի օպերատոր Լուսինե Մկրտչյանին:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունվարի 20
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-20, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«22» հունվարի 2020 թվականի N 4-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 45-Ն որոշման 8-րդ կետի, ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1. Գործառնական դասակարգման ընդհանուր բնույթի այլ դասերին չպատկանող բաժնի 4511 (սուբսիդիա) հոդվածը նվազեցնել 219,0 հազ. դրամով և ավելացնել նույն բաժնի 4215 (ապահովագրական ծախսեր) հոդվածին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Ն. Շադունց

2020թ. հունվարի 22
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«23» հունվարի 2020 թվականի N 5-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Վարուժան Ղազարյանի 23.01.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղում 09-101-026-010 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Տեղ 3-րդ փողոց թիվ 22 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. հունվարի 23
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունվարի 2020 թվականի N 6-Ա

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԻՍԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏՎՈԳՐԵՐ ԵՎ ՆՎԵՐՆԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով, ***որոշում եմ.***

1. 2019 թվականի ընթացքում մասնագիտական բարձր պատրաստվածության և ծառայողական պարտականությունները կատարելիս ցուցաբերած նվիրումի համար Գորիսի հրշեջ-փրկարարական ջոկատի երեք աշխատակիցների պարգևատրել պատվոգրերով և նվերներով.
   - ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի ՄՓՎ Գորիսի ՀՓՋ փրկարար, սերժանտ Աշոտ Տիգրանի Ասրյան
   - ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի ՄՓՎ Գորիսի ՀՓՋ ավագ հրշեջ, ավագ սերժանտ Գևորգ Սամվելի Գալստյան
   - ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի ՄՓՎ Գորիսի ՀՓՋ վարորդ, սերժանտ Սենիկ Անտոնի Կարապետյան
2. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Ն. Շադունց

2020թ. հունվարի 30
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» փետրվարի 2020 թվականի N 7-Ա

ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՏՈՒՐ ԳՅՈՒՂԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՅՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ և հաշվի առնելով Վահրամ Արզումանյանի 06.02.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. Տեղ համայնքի Վաղտուր գյուղի 2-րդ փողոց թիվ 18 հասցեում Յուրիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 1498 քմ տնամերձ հողամասում մինչև 2001թ. մայիսի 15-ը ինքնակամ կառուցված ընդհանուր արտաքին մակերեսով 235,0 քմ բնակելի տունը, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, որը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ճանաչել օրինական և համարել Յուրիկ Գրիգորյանի սեփականությունը:
2. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. փետրվարի 6
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«07» փետրվարի 2020 թվականի N 8-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Ռազմիկ Հայրությունյանի 07.02.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Կորնիձոր գյուղում 09-052-015-003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Կորնիձոր 8-րդ փողոց թիվ 17 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. փետրվարի 7
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» փետրվարի 2020 թվականի N 9-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի N 2387–Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով Հարութ Աղաջանյանի 11.02.2020թ. դիմումը, ***որոշում եմ.***

1. ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի Վաղատուր գյուղում 09-090-014-013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հասցեավորել և տրամադրել ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, գյուղ Վաղատուր 3-րդ փողոց թիվ 4 հասցե:
2. Կատարել համապատասխան գրանցում ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Սյունիք մարզային ստորաբաժանումում:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ **Ն. Շադունց**

2020թ. փետրվարի 11
գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնք,
հասցե գ. Տեղ փող. 35 թիվ 2, հեռ. 96-2-72, էլ. փոստ՝ tegh.syuniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» փետրվարի 2020 թվականի N 10-Ա

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 11-ի N3-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 20-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 2020 թվականի ապրիլի 5-ի հանրաքվեի անցկացման՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ, Արավուս, Կոռնիձոր, Խնածախ, Խոզնավար, Վաղատուր և Քարաշեն բնակավայրերն ընդգրկող ընտրական տեղամասերի համար սահմանել հետևյալ տեղամասային կենտրոնները.
   - Տեղ գյուղի մշակույթի տան շենք, հասցեն գ. Տեղ, 34-րդ փողոց թիվ 4
   - Տեղ գյուղի թիվ 2 միջն. դպրոցի շենք, հասցեն գ. Տեղ, 12-րդ փողոց թիվ 30
   - Արավուս գյուղի դպրոցի շենք, հասցեն գ. Արավուս, 8-րդ փողոց թիվ 30
   - Կոռնիձոր գյուղի դպրոցի շենք, հասցեն գ. Կոռնիձոր, 4-րդ փողոց թիվ 29/1
   - Խնածախ գյուղի մշակույթի տան շենք, հասցեն գ. Խնածախ, 5-րդ փողոց թիվ 2
   - Խոզնավար գյուղի մշակույթի տան շենք, հասցեն գ.Խոզնավար,3-րդ փող թիվ 5
   - Վաղատուր գյուղի ակումբի շենք, հասցեն գ. Վաղատուր, 2-րդ փողոց թիվ 37
   - Քարաշեն գյուղի մշակույթի տան շենք, հասցեն գ. Քարաշեն, 3-րդ փողոց թիվ 1
2. Սույն որոշման մասին տեղեկացնել բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնին, թիվ 34 տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնների տարածքները տիրապետողներին:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Տեղ համայնքի ղեկավար՝ Ն. Շադունց

2020թ. փետրվարի 12
գ. Տեղ